

ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ՅՈՐԵՆԵԱՆԻՆ առիթով ամենկան կր նկատենք մեր ընթերցողներուն ներկայացնել զրաբար երկու էջեր, ուր երկու ազգ. պատմիչներ՝ Ղազար Փարպեցի եւ Մովսէս Խորենացի, պատմած են հայ Տառերու Գիւսիքն հրաւա- իիքը, ա՛յնպէս՝ ինչպէս իրենց հասցուցած է ազգային աւանդութիւնը:

Ինչ որ այլ ըլլայ այդ մասին բամախորական հետազոտութիւններու հետամուտ միտերու կարծիքը, մեզի համար նուր- րական է որքան այդ աւանդութիւնը, նոյնքան ալ զայն մեզի հասցնող գրիչներուն կիրարկած ոճն ու լեզուն:

«Վաղվադակի ստիպով առաքեալ դեսպան զՎահրիճ անուն ոմն... առ այդ մի երէց Հարէլ անուն... փու- թանակի հասանէր առ սքանչելի եպիսկոպոս Դանիէլ. նախ ի նմին Դանիէլէ ինքն (Վահրիճ) տեղեկանայր... և առեալ առ սուրբ Հայրապետն Հայոց Սահակ և առ երա- նին Մաշթոց հասանէր... Բայց սեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանադրօք ստոյգ նշովել զհեզեհոյ բաւոյց նայկականաց հագներգարար մարացա- ծիւն այնուրի գծագրութեամբ: Զկնի այսորիկ ինքնին Մեսրոպ իջանէ ի Միջագետս հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ դատեալ քան զառաջինն՝ անցանէ յեղեւսիս առ Պղատոս ոմն ճարտասան հեթանոս, իշխան դիւանին: Եւ նորա խնդութեամբ ընկալեալ և զոր ինչ միանգամ ի միտ առնոյր բան հայերէն յինքն առեալ և շատ ջանացեալ և ոչ օգտեալ՝ զտգիտութիւն խոստովանեաց հետորն. և զայլ ոմն ասելով յոյժ հա- սու, վարդապետ իւր լեալ յառաջագոյն, և ապա առեալ զճարտարացն գրեան ի նոյն դիւանէն Եղեւսեայ և գնաց- եալ քրիստոնէութեան հաւատաց, որոյ անունն Եպիփա- նոս. զոր խնդրեալ դոցես լցուցանել զփափաքդ քո: Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն ի Բարեղոսէ եպիս- կոպոսէ գտեալ և անցեալ ընդ Փիւնիկէ՝ ի Սամոս դիմէ. Գանգի Եպիփանու վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռոփանոս, հրաշալի արուես- տիւ հելլէն գրչութեան, որ ի Սամոս էր միայնացեալ: Առ սա երթեալ Մեսրոպայ և յայսմ եւ անչո՛ւ մնացեալ՝ յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ ի քունն երազ և ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երե-ւուցեալ հոգւոյն՝ թաթ ձեռին աջոյ գրելով ի վե-րայ վիմի. զի որպէս ի ձեան՝ վերջք գծին կուտակեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երեւութացաւ, այլ և հան-գամանք ամենիցն որպէս յաման ինչ ի միտս նորա հա-ւաքեցաւ:»

Եւ յարուցեալ յաղօթիցն ետեղծ զնշանագիրս մեր՝ հանդերձ Հռոփանոսիւ, կերպածեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ, փոխադրելով զհայերէն աթու- թայսն ըստ անսայթաքութեան սիղոսայիցն ի Հելլենաց-ւոյն:»

ՓԱՐՊԵՑԻ

ԽՈՐԵՆԱՅԻ

«Վասնորոյ յաշխարհէս մերոյ առաքեաց հրչտակու- թեամբ զայր մի պատուական և հաւատարիմ իւր... Վահրիճ անուն... առ Հարէլ. զոր առեալ, և երթեալ նովաւ հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիէլ... եկեալ ե-տուն ցմեծն Սահակ և Մեսրոպ: Որոց... սեղեկացեալ գիտացին ոչ լինել բաւական այնու նշանադրօք ստոյգ նշովել զհեզեհոյ բաւոյց նայկականաց հագներգարար՝ մտրացածոյն և այնուրի գծագրութեամբ:»

Զկնի այսորիկ ինքնին Մեսրոպ իջեալ ի Միջագետս հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ դտեալ քան զառաջինն՝ անցանէ և լեղեւսիս առ Պղատոս ոմն ճարտասան և հեթանոս իշխան դիւանին: Եւ նորա խնդութեամբ ընկալեալ, և զոր ինչ միանգամ ի միտ առ-նոյր բան հայերէն յինքն առեալ, և շատ ջանացեալ և ոչ օգտեալ՝ զազիտութիւն խոստովանեաց հետորն Եւ զայլ ոմն ասելով յոյժ հասու, վարդապետ իւր եղեալ յառա-ջագոյն, և ապա առեալ զճարտարացն գրեան ի նոյն դի-ւանէն Եղեւսեայ, և գնացեալ քրիստոնէութեան հաւա-տաց, որոյ անունն Եպիփանոս, զոր խնդրեալ զտցես լցուցանել զփափաքդ քո:

Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն ի Բարեղոսէ եպիսկոպոսէ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէ ի Սամոս դիմէ քանգի Եպիփանու վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռոփանոս, հրաշալի ար-ուեստիւ հելլէն գրչութեամբ, որ ի Սամոս էր միայնաց-եալ: Առ սա երթեալ Մեսրոպայ, և յայսմ եւս անչո՛ւ մնացեալ՝ յաղօթս ապաւինի, և տեսանէ ոչ ի քունն երազ և ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի ե-րեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի, զի որպէս ի ձեան՝ վերջք գծին կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երեւու-թացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ:

Եւ յարուցեալ յաղօթիցն, ետեղծ զնշանագիրս մեր՝ հանդերձ Հռոփանոսիւ, կերպածեալ զգիրն Մեսրոպայ առ ձեռն պատրաստ, փոխադրելով զհայերէն աթու- թայսն ըստ անսայթաքութեան սիղոսայից Հելլենացոց:»

